

لوبية أرضية - المر السؤول: باروناك ظرواسيان 05827448064

ՀԱՅԵՐՈՒ ՓԱԽՈՒՍՏԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԻՆ ԿԱՐԳ ՄԸ ՎԱՅՐԵՐՈՒ ՄԷՋ
ՀԱԿԱՌԱԿ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՄՏԻՊՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ

ՀԱՅԵՐՈՒ ՓԱԽՈՒՍՏԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԻ ՄՏՐՊԵՅՃԱՆԵՆ

ՀԱՅԵՐ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԻ ԵՆԹԱՐԿԵՑԻՆ ՆԱԽԻՋԵԻԱՆԸ

Սորհրդային մամուլը կը հաղորդէ թէ խորհրդային կանոնաւոր բանակի եւ ներքին նախարարութեան զօրքերը՝ թիւով 11 հազար զինուոր՝ տակաւին չեն կրցած ամբողջութեամբ իրենց հակակշիռն տակ առնել կացութիւնը Ատրբայիջի Ղարաբաղի մէջ եւ թէ բազմաթիւ շրջաններու մէջ զինեալ բախումները շարունակուած են: «Իզվեսթիա» կը զրէ թէ կռիւներու ընդհանուր հաշուեկշիռն է 56 մեռեալ եւ 156 վիրաւոր՝ մեծամասնութեամբ հայեր, մինչ միջազգային լրատու աղբիւրներ մեռեալներու թիւը կը հասնեն 167ի եւ աւելի քան 250 վիրաւորի, մեծ մասամբ զոհ Պաքուի եւ այլ շրջաններու մէջ հակահայ փոկըմներու:

Թերթը կ'աւելցնէ թէ ստիպողական վիճակը, որ յայտարարուեցաւ Մոսկուայի կողմէ, տակաւին ամբողջութեամբ չ'որոշողութեամբ կարգ մը շրջաններու մէջ, որովհետեւ հայեր եւ աղերիններ մերժած են որոշումը, յայտնելով թէ նման որոշումներ չեն կրնար հարցը լուծել: Լեւոնային Ղարաբաղի մէջ եւ շրջակայքը կռիւները շարունակուած են նախկին սաստկութեամբ, խլելով նոր զոհեր երկու կողմերէն:

Լեւոնային Ղարաբաղի հիւսիսը՝ Շահումեան եւ Սանլար շրջաններու մէջ կռիւները շարունակուած են որսի հրացաններով եւ ինքնազօր զէնքերով: Գործածուած են նաեւ ինքնութիւնը անձանթ ուղղաթիւներ: Սորհրդային Միութեան քաղաքային օդանւորութեան նախարարութիւնը արդիւնք քաղաքային ուղղաթիւներու գործածութիւնը Ատրպէյճանի եւ Հայաստանի մէջ:

«Իզվեսթիա» կը զրէ թէ վերջին 24 ժամերուն հայեր 16 յարձակում գործած են զէնքի եւ զինամթերքի մթերանոցներու եւ վաճառատուններու վրայ եւ իրենց հետ տարած են մեծ քանակութեամբ զէնքեր, իրենց ինքնապաշտպանութեան համար գործածելու համար:

Սորհրդային կառավարութեան պաշտօնաթերթը կ'աւելցնէ թէ «աղերի աւազակներ», 10 կամ 15 հոգինոց խումբակներով եւ ինքնաշարժներով շրջած են Պաքուի փողոցները եւ թալանած հայերու բնակարանները: Անոնք այս ձևով թալանած են հազարէ աւելի հայկական բնակարաններ: Այս աւազակները գործած են անսահման համարձակութեամբ եւ անոնց հակակշիռ: «Իզվեսթիա», իր լուրերը բազմաթիւ ներքին նախարարութեանէն կը հաղորդէ թէ «աղերի աւազակներ» նոյնիսկ փորձած են յարձակում գործել զինուորական խարխիսի մը վրայ, մարդու մահմանուած հրապարակը ձեռք ձգելու համար:

Միշտ համաձայն «Իզվեսթիա»-ի, Կասպից ծովու խորհրդային նաւային ուժերու խարխիսը յարձակումի ենթարկուած եւ փուլ եկած է: Ըստ առաջին հաշուեկշիռի, կա՛ն 16 մեռեալներ: Օգնութեան աշխատանքները կը շարունակուին: Թերթը յատկօրէն չի յայտնել յարձակողներուն ինքնութիւնը եւ չ'ենքի փուլըմին պարագաները:

ԱԶԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱԿԱՏԸ Կ'ՕԳՆԷ
ՀԱՅԵՐՈՒ ՊԱՐՊՈՒՄԻՆ՝ ՊԱՔՈՒՆԷ

Օտար լրատու սպասարկութեան մը թղթակիցին կողմէ հետախօսող Մոսկուայէն հարցապնդուելով՝ աղերի աղաքական ճակատի բանքեր Սուաի Ալաեւ ըսած է թէ Պաքուի մէջ կացութիւնը ամբողջութեամբ չ'անդադարեցաւ եւ տակաւին անկարգութիւններ կը պատահին մայրաքաղաքին կեդրոնը:

Ատրպէյճանի Ժողովրդական Ճակատին կողմէ կազմուած «Աղաքային պաշտպանութեան խորհուրդը» կը յայտնէ թէ աղերի երկոտասարդներ կը շրջապային Պաքուի փողոցներուն մէջ, իրր կարգը վերահաստատելու եւ օղնելու համար, որ անխնայ կերպով մեկնին Պաքուէն»:

«Իզվեսթիա» կը զրէ թէ աղերի Ժողովրդական ճակատի ներկայացուցիչներ ելոյթ ունեցած են ռատիոյէն եւ պատկերասրահին եւ պատասխարտած են հայերու դէմ ի գործ գրուած բանարարքները եւ ժողովուրդին հանդարտութեան եւ ինքնագոյութի կոչեր ուղղած: Բանքեր Ալաեւ ըսած է թէ «հակահայ սղանդը չ'աւ լու կազմակերպուած էր» եւ կը ձգտէր անկայունացնել կացութիւնը երկրին մէջ, տեղական դերազոյն խորհուրդի (երեսփոխանական Ժողով) ղեկավարութեան նախօրեակին, որպէսզի վարկարեկեն Ժողովրդական ճակատը եւ արդիւր հանդիսանան անոր յաղթանակին:

Անշուշտ կարելի էլ հաւատք ընծայել թերթին այս հայտարարութեան, հաստատ զիտնալով որ ճակատը ինքն է հրաժարու եւ կազմակերպիչը հակահայ փոկըմներուն:

Մանաւանդ որ անկախ աղբիւրներ երէկ յայտնեցին, որ նոյն ճակատի միւլիները ներկայիս պաշարած են Պաքուի նահանգիստն ու օդակայանը, թոյլ չտալու համար հայերուն մեկնումը, զանոնք իրեն պատանդ պահելու յայտնի գիտաւորութեամբ:

ՊԱՔՈՒԻ ՀԱՅԵՐԸ ԽՄԲՈՒԱԾ ԵՆ ՇԱՐԺԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ԵՒ ՄԻԼԻՄԵՐՈՒ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը յայտնէ՝ իր տեղեկութիւնները քաղելով Մոսկուայի հայ պատասխանատուներէն՝ թէ բազմահազար հայեր համախմբուած են Պաքուի շարժանկարի սրահներուն եւ միլիտարի կեդրոններուն մէջ, սպասելով մեկնելու իրենց կարգին: Երկու տարի առաջ, կ'աւելցնէ ԹԱՍՍ, Պաքուի մէջ՝ մէկ միլիոն բնակչութեան 220.000ը հայեր էին: Ներկայիս անոնց թիւը մի քանի հազարը չ'անցնիր: Անոնց մեծամասնութիւնը մեկնած էր Պաքուէն անցեալ տարի, վախճալով աղերիններու հակահայ վայրագութիւններէն:

Պաքուի եւ Ատրպէյճանի միւս քաղաքներու հայերը զինուորական հսկողութեան տակ կ'առաջնորդուին Քրասնոփոտք, Կասպից ծովու եզերքը եւ այդպէս օդանւորով կը փոխադրուին Հայաստան կամ այլ շրջաններ: Երեքշաբթի օր հայերու առաջին խումբեր հասան Երեւան, իսկ ուրիշներ փոխադրուեցան Վրաստանի Սոխում քաղաքը, Քրասնոտոր՝ հարաւային Ռուսիա եւ Տիբիլիսիի թրովսը՝ Ուրբանիա: Համաձայն խորհրդային լրատու գործակալութեան, օրական մօտ հազար հայեր կը մեկնին Պաքուէն: Երկու օրուան մէջ երկու հազար հայեր արդէն իսկ մեկնած են:

Թէեւ բուռն խռովութիւններն ու ջարդերը տեղի ունեցան Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուի մէջ, սակայն անոր խնայուեցաւ ստիպողական վիճակի դրութիւնը, հաւանարար աւելիով չ'ըրգուելու համար աղերիններու աղգայնամուլական զղացումները: Աղերինները՝ ամէն կողմ՝ զէչ ընդունելութիւն ցուցարեւած են խորհրդային զօրքերուն: Բարձրատիճան սպայ մը պատկերասրահին ելոյթ ունենալով ըսած է թէ «ատրպէյճանցիները զինուորներու վրայ կը կրակեն բոլոր շրջաններու մէջ»:

ՀԱՅԵՐ ՇՐՋԱՓԱԿԱԾ ԵՆ ՆԱԽԻՋԵԻԱՆԸ

Մոսկուայի ռատիոկայանին համաձայն, հազարաւոր հայեր շրջափակումի տակ առած են Ատրպէյճանի կազմին մէջ զանուոյ նախիջեանի ինքնավար Հանրապետութիւնը, որ Իրանի սահմանակից է: Նոյն աղբիւրը աւելցուցած է թէ մօտ 3000 հայեր յարձակում կատարած են այդ շրջանի մէջ զանուոյ աղերի զիւղի մը վրայ:

Իրանեան ԻՐՆԱ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ թէ մօտ 30 աղերիններ, հակառակ հայերու պարտադրած շրջափակումին, կրցած են լողալով անցնիլ Արաքս գետը եւ հասնիլ Իրան: Ատրպէյճանցիներ տարուոյն սկիզբէն ի վեր կը պահանջեն՝ ցոյցեր կատարելով՝ երկու երկիրներու միջեւ սահմանային անցքի ձեւակերպութիւններու վերացումը, որպէսզի զիրաւ միանան հիւսիսային Իրանի իրենց հինգ միլիոն հաշուող արեւակիցներուն:

Թուրքիա, որ 350 քիլոմէթր սահմանադիմ ունի Հայաստանի հետ, յայտարարեց թէ զօրացուցած է իր սահմանին հսկողութիւնը օդնական նոր ուժերով եւ պատրաստաւ կամութիւն յայտնած է բարեխրական օժանդակութիւն ընել հայերուն:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՅՈՒՅԱՐԵՐԷ

Սպիտակ Տանբանքեր Մարլին Ֆիցուսթըր, իր մամլոյ ասուլիսին ընթացքին անդրադարձաւ Անդրկովկասի անցուղարձերուն եւ ըստ թէ Ուաշինկթընի կառավարութիւնը իրաւունք կուտայ Մոսկուային՝ բանակային զօրքեր զրկելու Ատրպէյճան եւ Ղարաբաղ, վերջ տալու հայերու եւ աղերիններու միջեւ ծագած բախումներուն: «Որեւէ կառավարութիւն, աւելցուց բանքերը, իրաւունք ունի պաշտպանելու իր քաղաքացիները: Մեր կարծիքով, այս է Մոսկուայի զլխաւոր մտահոգութիւնը»:

Բանքերը ըստ նաեւ թէ կացութիւնը «չ'աւ զժուար է Ատրպէյճանի մէջ» եւ թէ հայերու եւ աղերիններու հակամարտութիւնը աւանդական է:

ԵՐԵՒԱՆ, 17 ՅՈՒՆԻՈՒԱՐ 1990

Հեռագիր՝ Սփիւտակաւայութեան հետ Մշակութային կապի կոմիտէի նախագահ Կարլեն Գալախեանէն:

(Շար.ը տեսնել Գ. Էջ)

Այսօր թերթերը հրատարակել են ԽՍՀՄ դերագոյն խորհուրդի նախագահութեան հրամանադրը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզում եւ մի քանի այլ շրջաններում արտակարգ դրութիւն (ստիպողական վիճակ) յայտարարելու մասին: Արտակարգ դրութիւն է մտցուած ԼՂԻՄ-ում, նրան յարող ատրպէյճանական շրջաններում, Հայաստանի Գորիսի շրջանում, ինչպէս նաեւ Խ. Միութեան սահմանի երկայնքով Ատրպէյճանի տարածքում եղած սահմանամերձ գօտում:

Ինչպէս հաղորդում է Հայաստանի կառավարութեան գործողութիւնների գրասենեակը, Յունուար 15ի դիշերը՝ պայթուցիկ շրջաններում իրադրութիւնը համեմատաբար հանդարտ էր, բացառութեամբ Գետաշէնի ենթաշրջանի Աղատ գիւղի, որի վրայ ատրպէյճանցի զինուած յեղուղակներ քանիցս գոռհներ են ձեռնարկել, բայց արժանի հակահարուած են ստացել խորհրդային ներքին զօրքերի կողմից: Այդ շրջաններից Երեւանի հիւանդանոցներն են տեղափոխուել 14 թեթեւ վիրաւորներ:

Արմենիոյի հաղորդման համաձայն, Ատրպէյճան են ուղարկուել զինուորական օգնական ուժեր: Պաքու քաղաքում մտցուել է սլարետային ժամ (կրակմարի դրութիւն):

Չճշդուած տուեալներով, այդտեղի վայրագութիւնների զոհ է դարձել 44 հոգի, որից 34ը հայեր են: Վեցի ինքնութիւնը հնարաւոր չէ եղած պարզել: Վերջին երեք օրում Ատրպէյճանից Հայաստան է եկել մօտ 2000 փախստական հայ, իսկ Մոսկուա են հասել 600 ուրիշներ: Հայերու փախուստը Ատրպէյճանէն կը շարունակուի:

Երէկ, Սփիւռքահայութեան հետ Կապի Կոմիտէի ընդհանուր ժողովը դիմեց Ռոտինա համամիութենական միութեան, խորհրդային հանրապետութիւնների համանման կազմակերպութիւններին՝ քաղաքական գնահատական տալու եւ դատաւարտելու համար Ատրպէյճանի աղղայնամուկների սանձադերժած նոր ցեղասպանութիւնը, պատժելու համար յանցաւորներին՝ թէ անմիջական կատարողներին թէ ալ նրանց թիկունքում կանգնած հայատեաց քաղաքականութեան զաղափարախօսներին եւ հովանւորողներին:

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱԿԱՏ»Ը ԱՐԳԵԼՔ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՅ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՐԱՍԱՅԼԵՐՈՒ ՊԱՔՈՒ ՄՈՒՏՔԻՆ

Ատրպէյճանի «Ժողովրդական Ճակատ»ի կողին ընդառաջելով, բաղմահազար ազերիներ հաւաքուեցան մայթերու վրայ եւ փողոցներու մէջ, աբգելք հանդիսանալու համար խորհրդային բանակի հրասայլերուն, յառաջխաղացին, դէպի Պաքուի ռազմագիտական զիրքերն ու օդակայանը: Ազերիներ զանազան արգելակներ, մանաւանդ ինքնաշարժներ տեղաւորած են գլխաւոր անցքերու վրայ, անոնց յառաջխաղացքը կասեցնելու համար:

Խորհրդային բանակը՝ միւս կողմէ, մուտք գործած է Ատրպէյճանի միւս շրջանները եւ հասած Լեռնային Ղարաբաղը շրջապատող բլուրներուն: Մօտ երկու հազար զինուորներ, ծանր զէնքերով զինուած, զիրք գրաւած են բլուրներու վրայ: